



ՊԱՇԱՐՄԱՆ ՄԵԶ ԱԼԻՔՎՈՂ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐՅԱԽՅԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՈՒՐԱԽ

ԵՎ ՏԵՈՒՐ ԱՌՕՐՅԱՆ

Ստեփանակերտի «Ղարաբաղ» հյուրանոցում ծնված փոքրիկը Շուշիից փախած մոր գրկում թռչկոտում և աջ թաթիկը բռնակցված վեր է բարձրացնում՝ իր հետ խաղացող երեխաների «միացո՛ւմ» վանկարկումից։ Դեռ «հաց» ու «ջուր» բառերի թորովանքը չսովորած՝ մանկիկը սովորել է... պալաքարել։

Պալաքարում են նաև նրանից ավելի մեծ երեխաները, որոնց, չգիտես ինչպես կոչես. համագյուղացի չեն, համաքաղաքացի չեն, ուրեմն՝ «համահյուրանոցային...»։

Ծանոթացել են այստեղ՝ խառնելով ու ձուլելով Բաքվից, Սումգայիթից, Կիրովաբադից ու Մինգեչաուրից բերած ռուսերենի օտարախառն տարախոսվածքները, որից մեկ տարում ստացվել է արցախյան բարբառի մի նոր համաձուլվածք։ Եվ, ահա, այդ «դեկորատիվ» արցախերենով էլ մասնակցում են իրենց հայրերի ու մայրերի մեծ պալաքարին, համագային ազնիվ շարժմանը։ Մասնակցում են... խաղալով։ Իսկ խաղում են միայն «պատերազմ»։ Եվ օրեցօր դժվարանում է «թուրքերի» բանակի համար «գինվոր» գտնելը...

Սրանք նախադպրոցական տարիքի այն երեխաներն են, ովքեր մանկապարտեզ չեն հաճախում։ Ո՛ր, երբ քաղաքի մանկապարտեզներում երեխաները բառացիորեն լցված են իրար գլխի, ինչպես ասենք Ստեփանակերտի № 5 մսուր-մանկապարտեզում։

Մարզի կենտրոնից դուրս եկող և դեպի պատմական հայ Շուշի ձգվող ճանապարհի սկզբում, Չկալովյան փողոցի աջակողմյան կանաչապատ բլրի լանջին է այս մանկական հիմնարկը, քաղաքի ամենահին մանկապարտեզը։ Գործում է դեռևս 1935 թվականից։ Հին է նաև նրա՝ բոլորովին իր դերին չհամապատասխանող շենքը։ Նախկինում այն եղել է կրծքի երեխաների տուն, ապա մի քանի տարի մանկամսուր և վերջապես «մի գրլխով» բարձրացել է և դարձել մսուր-մանկապարտեզ։



ԺԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆ

Բնական է, որ 30-ական թվականներին կառուցված և հետագա տասնամյակներում միայն մասնակի վերանորոգումների ենթարկված շենքը չի կարող բավարարել մանկական հիմնարկի այսօրվա պահանջները, որքան էլ որ վերակառուցվի։ Եվ այն էլ այն դեպքում, երբ առաջին հարկի մի քանի սենյակները հատկացված են մանկաշխարհի հետ ոչ մի կապ անգամ չունեցող մի հիմնարկի... հաշվապահական դասընթացներին։ Այդքանից հետո անգամ մանկապարտեզը կարողանում է կատարել իր հիմնական դերը՝ դաստիարակել, ձևավորել իր տասնյակ սաներին, նրանց համար հետաքրքիր դարձնել ոչ այնքան ուրախ, ոչ այնքան ապահով առօրյան։

Ութ խումբ՝ նախատեսված 5-ի փոխարեն, 270 երեխա՝ 185-ի փոխարեն, ահա բնական վիճակը։ Եվ պարզ է, որ խմբերում էլ փոքրիկները շատ ավելին են, գրեթե կրկնակի, քան նրանց համար նախատեսված սեղաններն ու մահճակալները։ Խմբերում ե-



րեխաների խտությունն ավելի մեծացավ ՍՈՒՄԳԱՅԻԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ հետո, փախստականների մեծ հոսքին զուգընթաց: Անտուն-անօթևան հայրենակիցներին ապաստան տվածները նախ մեկ-մեկ, ապա խմբերով սկսեցին մանկապարտեզ բերել իրենց մոտ ապրող փոքրիկներին: Նեղվածքին հարմարվելն ավելի հեշտ է, դժվարը լեզվի հարցն է: Զարմանալի կերպով, անգամ իրենց գլխին եկած արհավիրքից հետո, տունուտեղից, աշխատանքից զրկվելուց հետո փախստականներից ոմանք չեն ձգտում իրենց երեխաներին հայկական դպրոցներ ու մանկապարտեզներ ուղարկել: Ավելին. մանկական առաջին հայերեն թոթովանքները համարյա խեղդում են «սաղմի» մեջ. ստիպում են խոսել ռուսերեն: Ասես իրենք շատ մեծ բանի են հասել իրենց մայրենին մոռանալու և ապագազանգալու միջոցով... Զարմանալուց ավելի զայրանում ես...

Ամենից առաջ և ամենից ավելի զայրանում է մանկապարտեզի վարիչը՝ ԺԱՆՆԱ ԱՅՎԱԶՅԱՆԸ, մանկաշխարհին ամբողջովին նվիրված, նրա հոգսերն ու հրապույրներն իր կյանքի ու ճակատագրի հետ մեկընդմիջ առնված հայուհին:

Ախալցխայում ծնված ու մեծացած և Երևանի Ալ. Բակունցի անվան մանկավարժական ու-

սումնարանում սովորած աղջկա մտքով երբեք կանցնե՞ր, թե տարիներ անց ինքը կապրի Ստեփանակերտում, փոքրիկ արցախցիների հեքիաթային-ռոմանտիկ աշխարհում, կդառնա մանկական մեծ ընտանիքի մեծ մայրը՝ իր երեք բալիկներին «նվիրելով» այս նույն ընտանիքին: «Մեղավորը» Երևանում ուսանող այն թխահեր լեռնցին էր: Եվ հիմա, ավելի քան 15 տարի անց, չի կարող պատկերացնել իրեն այս քաղաքից, մաքառող-պալքարող այս լեռնաշխարհից դուրս, նրա հոգսերից ու նվիրական նպատակներից հեռու:

Նոր բնակավայրում աշխատանքային կենսագրությունն սկսեց քաղաքի առաջին մանկապարտեզում, որպես մեթոդիստ: Մտածում էր՝ կաշխատի 2—3 տարի, կամ դպրոց կգնա, կամ երաժշտական որևէ հիմնարկ:

— Զարմանքով նկատեցի, — ասում էր, — որ բոլոր փոքրիկ արցախցիները երաժշտական թաքնված ընդունակություններ ունեն, մի փոքրիկ կայծ ու բացվում են...

Գուցե տարօրինակ թվա, բայց վարիչը գեղագիտական դաստիարակությունը սկսեց... դաստիարակչուհիներից, որովհետև տասնամյակներ շարունակ Ադրբեյջանի ղեկավարները աշխատում էին կտրել հայ արմատները, զրկել լեզվից, հեռու պահել հայ կուլտուրայից: Անհրաժեշտ էր նաև հայացնել դաստիարակչուհիներին ու դայակներին, և այն էլ ոչ միայն ռուսական խմբերում: Հայկական խմբերի դաստիարակչուհիներն անգամ հայերեն չգիտեին և մեղավոր չէին դրանում: Բոլոր ծրագրերն ու մեթոդական ցուցումները, երգերի ու խաղերի բոլոր տեքստերը ադրբեյջաներեն կամ ռուսերեն էին: Եվ մանկապարտեզի նոր ղեկավարը սկսեց հայ մանկավարժներին... հայերեն սովորեցնելու իր բարի առաքելությունը: Ապա անցավ ծրագրի երկրորդ կետին՝ սկսեց հայացնել ռուսական խմբի հայ երեխաներին ու դաստիարակչուհիներին: Արդյունքը եղավ այն, որ մի քանի տարի անց Հայաստանից ու ԱՄՆ-ից ժամանած հյուրերը Ստեփանակերտի օդանավակայանում հուզմունքից արտասվեցին, երբ լսեցին երեխաների ֆիդայական երգերը և անվանի մանկագիր Գուրգեն Գաբրիելյանի՝ վերջերս գրած բանաստեղծության արտասանությունը.

Արցախը ցավոք,

Դարձավ Դարաբաղ,

հորի «մորից» տեսավ

Միայն ցավ ու դաղ:

Հիմա կարծես թե

Արևն է բացվում՝

Որդին ուղում է

Արդար միացում...

Ապա ստեղծվեց դաստիարակչուհիների և դայակների երգի պարի խումբը: Եվ, ահա, 5 տարի է, ինչ աշխատողների «ՄԱՐԱՆԻ» խումբը հիացնում է ամենուր՝ անգամ մարզի սահմաններից դուրս:

Պարզ է, որ երաժշտասեր դաստիարակչուհիների սաները նույնպես պետք է ցույց տալին իրենց շնորհքը: Երեխաների «ՔՈՉԱՐԻ» խումբը պետք է ասեր իր խոսքը, եթե... չլինեք 1988 թ. փետրվարը: Հիմա ո՛չ աշխատողները, ո՛չ էլ երեխաները երգելու և պարելու տրամադրություն չունեն: Թե՛ հայկական և թե՛ ռուսական խմբերում դաստիարակչուհիներն ամեն օր մեկական ժամ զրույց են անցկացնում արցախյան շարժման թեմայով: Երեխաների համար «ինչուներ» չպետք է լինեն: Միևնույն է, իրենց կամքից անկախ, դարձել են այդ շարժման մասնակիցները: Որեմն՝ թող իմանան ճշմարտությունը: Իսկ եթե երգում են, ապա միայն ֆիդայական երգեր:

Իսկ հոգսեր՝ որքա՞ն ասես: Մոտենում է արցախյան խստաշունչ ձմեռը: Տևական գործադուլը կիսատ է թողել նաև շինարարական շատ հարցեր: Արցախում այս տարի առաջին անգամ ուսումնական տարին չսկսվեց սեպտեմբերի 1-ին: Եվ, առհասարակ, ուսումնական տարվա սկզբի օր չեղավ: Զորանոցներ դարձած շատ դպրոցներում անհրաժեշտ էր մաքրել զինվորական կոշիկների դրոշմները դրպրոցական անմեղ-մաքուր միջավայրից...

Ժամանա Այվազյանի համար նույնպես ձմեռնամուտը հոգաշատ ու լարված է: Մանկապարտեզի շենքը նորոգվում է՝ պարապմունքները ընդհատելու պայմաններում: Նա գոհ է այնքանով, որ մարզի՝ վառելափայտով տաքացվող մանկապարտեզների կողքին կարողացել է ապահովել ջեռուցման համակարգի վերանորոգումը: Փոքրիկները չպետք է մրսեն: Իսկ առավել ջերմ պետք է լինի նրանց հոգիները: Պաշարման մեջ ալիքվող, մաքառող ու հերոսացող լեռնաշխարհին նույնքան հաստատական, քաջարի և աննկուն հերթափոխ է պետք...

ՄՈՒՇԵՂ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ